**Արձանագրություն N 5**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/8-02/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «28» փետրվարի 2017թ.

ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Խորեն Պետրոսյան** ՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Կարեն Մելքոնյան**՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

**Արթուր Թամրազյան**՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Էլլադա Արզաքանյանը՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:*

**1.1 Տեղեկություններ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/08-02/17» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին**

Միաժամանակյա բանակցություններին ներկա է գտնվել <<ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ>> ՍՊԸ-ն:

Միաժամանակյա բանակցություններին ներկա չի գտնվել <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ-ն, <<ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ն, <<ՍՏԱՐՏԿՈՊԻ>> ՍՊԸ-ն, <<ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ն, <<ՏՈՆԷՔՍ>> ՍՊԸ-ն:

Միաժամանակյա բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին նիստին ներկա մասնակցի կողմից առաջարկված գներն են.

**ՀՀ դրամ**

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | <<ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՌ ԷՄ>> ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 6 | Թմբուկ | 38095.24 | 1571.43 | 39666.67 | 7933.33 | 47600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 23 | Մաքրող դանակ | 24500 | 700 | 25200 | 5040 | 30240 |
| 24 | Մաքրող դանակ | 57142.86 | 1190.48 | 58333.34 | 11666.66 | 70000 |

**2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.**

2.1. 1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 15-րդ և 16-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ին.

1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ և 16-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՐ ԷՄ>> ՍՊԸ -ին:

15-րդ չափաբաժնի մասով ներկայացված այլ հայտեր չկան:

2.2. 2-րդ և 26-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ-ին:

2-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

26-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՐ ԷՄ>> ՍՊԸ -ին:

2.3. 5-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 14-րդ, 17-րդ, 20-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՐ ԷՄ>> ՍՊԸ -ին,

5-րդ և 14-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ>> ՍՊԸ-ին,

6-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

8-րդ, 20-րդ, 22-րդ, 25-րդ, 29-րդ և 30-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ին,

10-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-ին,

17-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել <<ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ-ին:

2.4. 11-րդ և 21-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՏՈՆԷՔՍ» ՍՊԸ**-ին,

11-րդ չափաբաժնի մասով առկա է ներկայացված գների հավասարություն:

21-րդ չափաբաժնի մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.5. 13-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՍՏԱՐՏԿՈՊԻ» ՍՊԸ-ին** , 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ՆՈՐՄԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ –ին:

2.6. 18-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **<<ՋԻ ԵՄ ՋԵԹ ՍԵՐՎԻՍ>> ՍՊԸ**-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ <<ՊՐՈՖԻԼԱՅՆ ԷՐ ԷՄ>> ՍՊԸ –ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**<u>Հանձնաժողովի քարտուղարին.</u>**

**3.1** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը:
**3.2** Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017 թվականի մարտի 06-ը ներառյալ, ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2017 թվականի մարտի 09-ին, ժամը՝ 12:00-ին:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ______________ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝ ______________ Խորեն Պետրոսյան

______________ Կարեն Մելքոնյան

______________ Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ ______________ Մարիամ Հայրապետյան